Ը. ՏԱՐԻ 2306 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 14 ՀՈԳԻ 4384 — 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1891 — 1 ՐԷՊԻՒ ԷՎՎԷԼ 1309 — Ե ԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ՆԻՒԹ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده غلطه ده نورادونکیان خاننده آروره
عزتنه سی ادارهسنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱՖԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արժէք	150
» » Վեցամսեայ »	75
» » Եռամսեայ »	40
Օտար երկիրներէ Տարեկան »	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մանրատառ տարեկան Տարեկան Օտ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախք մերինակ	Ղրշ. 50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ չստացուած դրութիւն կամ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՍԵՊՏ. 23|5 ՀՈԿՏ. 1891

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Անցեալ շաբթուն ի Լեմպերկ, Կալիչիա, բացուեցաւ լատինադաւան յունադէս Ռուսիէն կոչուած փոքր-ռուս հասարակութեան եկեղեցական ժողովը կամ Սինոդն, որոյ մասին ռուս կառավարութեան և Վատիկանի միջեւ կատաբուած բանակցութիւնն արդէն ծանուցած ենք։

Վիեննայի լրագրաց տուած տեղեկութեան նայելով, այս գումարման նպատակն է աստուեան Տէրութեան հպատակ այս սլաւ ժողովրդեան եկեղեցական դաւանութեանց ու կարգաց մէջ այնպիսի փոփոխումներ մուծանել որ ծէսերու մասին դեռ ևս արեւելեան Եկեղեցւոյ յարեալ այս հասարակութիւնն ե՛ւս առաւել ձուլուի պապական Եկեղեցւոյ հետ։

Թէեւ Սինոդին անդամք խօսք տուած են խորհրդակցութիւնները դուրս չհանելու, բայց արդէն իմացուած բաներէն կ'երեւի թէ խորհրդակցութիւնք կատարեալ միաբանութեամբ չեն կատարուած։ Թէև բարձրատիճան կղերն աւելի հակում կը ցուցնե Հռոմայ Եկեղեցւոյն հետ ձուլման, բայց կղերի խոնարհագոյն դասք սաստկապէս կը հակառակին։

Առաջարկուած է Ռուսիոնաց ուսնացոյցին վրայ 28 սուրբեր ևս աւելցնել, որք վերջին ժամանակներս դասուած էին սրբոց կարգին մէջ, տնօրինութեամբ Հռոմայ Եկեղեցւոյն։ Բայց ռուսիէն կղերին չատեր իրենց Եկեղեցւոյն մէջ այս նորութիւնը մուծանել չեն ուզեր։ Այն նոր սրբոց մէջ են Սպանիոյ Մեծ Հաւատքնեիչներէն Արպուէյ և Թորքուէմատա, զորս սրբոց կարգը դասած էր Պիոս Թ. Պապը։ Ռուսիէն քահանայ մը դիտել աւեր է թէ այս դումինիկեան կրօնաւորներուն հրապարակաւ ազգութիւն ռուսիէն ժողովրդեան մէջ և ի Կալիչիա շատ պատեհ չի լինիր, երբ համարն Աւստրեան Տէրութեան վարժարանաց մէջ պատմութեան դասեր կը տրուին և դասագիրքեր կը կարդացուին յորս այս անձնաւորութեանց վրայ յոյժ անպատշաճ դաղափարք կը յայտնուին։ Եւ արդէն դիտել կը տրուի թէ այն երկու հռչակաւոր Հաւատքնիչներուն սրբացումն Հռոմայ Եկեղեցւոյն կողմէ երբեք պաշտօնապէս չէ հռչակուած ի Կալիչիա։

Այս մասին ռուսիէնական Սինոդին վերջնական որոշումը դեռ չէ ծանուցուած։

* * *

Մասնաւոր դիպուածներ զանց առնելով, բնաւ տարակոյս չկայ թէ Ֆրանսէ եղէգի կայսր արժանավայել պատուովք և ժողովրդային չերմագին խանդաղաութեամբ ընդունուեցաւ և մեծարեցաւ Պոհեմիոյ մէջ։ Երկու կողմերուն ալ, Չեհերուն և Գերմաններուն, հայրական խրատներ տուաւ, որք խորապէս ազդեցին։ Ցորդորեց զանոնք իբրեւ մէկ հայրենիքի զաւակներ ձեռք ձեռքի տուած դործակցիլ Պոհեմիոյ գեղեցիկ երկրին եւս քան զեւս զարդացման ու բարգաւաճման։ Ն. Վեհափառութիւն ի Փրակ ո՛չ միայն գերմանական այլ եւ չեխական ազգային թատրոնն այցելեց, և այն առթիւ իւր չեհ հպատակաց հաւատարմութեան, ճարտարմութեան և աշխատասիրութեան համար գովեստներ տալով հանդերձ, Կայսրը դիտողութիւններն ալ չմնայեց։ օրինակի համար, երբ ցաւ յայտնեց այն հաստատեան ցոյցերուն համար զորս Չեհերը բերեր էին, խրատ, ռուս, պուլկար և ֆրանսացի այցելուաց դալստեան առթիւ։ Կայսրը բացարձակ ըսաւ քաղաքապետին թէ այսպիսի ցոյցեր հարենասիրութեան հակառակ են, և ցաւ պատճառած են իրեն, և կը յուսայ որ այլ ևս պիտի չկրկնուին։ Կայսեր այս անկողմնակալ և համարձակ լեզուն հերքում մ'էր մոռնաց մարդոց դրածներուն, որ վախ կ'արտայայտէր թէ Չեհք Կայսեր այցելութեամբ պիտի քաջալերուին պահանջելու որ Պոհեմիա դառ թագաւորութիւն մը լինի Հապսպուրկեան վեհապետական գերդաստանին իշխանութեան ներքեւ։ Ռուս լրագրիք ալ գրեցին թէ Ֆրանսական նաւատորմին ի Քրոնչդատ այցելութենէն ետքն ի Վիեննա հարկ դատուած է սերաչահիլ Տէրութեան սլաւ հպատակները։ Բայց յայտնի է թէ Կայսեր ի Փրակ այցելու խորհուրդը Քրոնչդատի դէպքերէն շատ առաջ է։

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տարւոյս առաջին վեցամսէին մէջ ռուս Տէրութեան կառավարական հասոյթք արտադրած են 423,200,000 ր. որոյ 40½ միլիոն ր.ը սովորական հասոյթ։ Նոյն միջոցին կառավարական ծախքերն եղած են 406,600,000 ր., որոյ 396 ու կէս միլիոնը սովորական ծախք, որով այս առաջին վեցամսեայն 16,600,000 ր.ի հասոյթից առաւելութիւն մը կը ներկայէ։ Իսկ անցեալ տարւոյ առաջին վեցամսէին, ռուս Տէրութեան հասոյթք 427,300,000 ր., և ծախքերը 429,700,000 ր.էին, որով 2,400,00 ր.բաց մը կար։ Այս տարի անցեալ տարուան համեմատապէս Ռուսիոյ ելեւմտից յաջող վիճակին վերայ այս ծանօթութիւն բարեպատեհ ժամու մը կը արուի, յաջողցնելու համար ռուսական նոր փոխառութիւնը։

* * *

Վլատիվոսթոքէ (ռուսական նաւահանգիստ արեւելեան Սիպերիոյ, Խաղաղական Ովկիանոսին վրայ.) կը ծանուցուի թէ Ֆրանսական մարտանաւէ մը դուրս եկած նաւազ մը այն նաւահանգստին մօտ սպանուած է։ Վէյա-Ֆրանսական շրջուն մարտանաւն ի Վլատիվոսթոք դտնուած պահուն, սպայք սովոր էին շրջակայքը պտրտիլ։ Ռուսէս անուն ենթասպայ մը առանձին պտրտելու կ'երթայ, և նաւը չի դառնար։ Հետեւեալ օրը գինք կը փնտռեն, և դիակը կը գտնեն անտառի մը մէջ, բրնամեցեալ և խոցեալ։ Ոստիկանութիւնը կասկածեցաւ թէ Չինացիներ սպաներ են զանիկա։ Ռուսիոյ զինուորականք, քանի որ այն թուականի վիճակագիր մը կը յայտնէ թէ 100 հազար զինուորականաց վրայ 47 ինքնասպան եղած էին։ Այժէրիի մէջ գտնուող Ֆրանսացի զինուորականք կրկնապատիկ աւելի կը դիմեն ինքնասպանութեան։ Պէյժ բանակին մէջ այս հանմամանութիւն 24 է, անգլ. բանակին մէջ 23, ռուսականին մէջ 20, սպանիականին մէջ 14, միջա 100.000 զինուորականաց վրայ։

ՊՈԼԻԿԱՐԱԳԱՆ ԳՈՐԾԵՐ

Սոֆիայէ հակառակ աղբիւրէ կը ծանուցուի թէ անհամաձայնութիւնք կան Ֆերտինանտ իշխանին և Պ. Սթամպուլովի միջեւ, Եկզարք Տ. Եոսէֆ Արքեպիսկոպոսին նկատմամբ բռնուելիք ընթացից վրայ։ Նախարարապետը կ'ուզէ եղէր որ պուլկար կառավարութիւնն ինչ ինչ միջոցներ ձեռք առնու Եկեղեցութեան դէմ։ Բայց իշխանը, թէեւ կրօնով կաթոլիկ, չուզեր պուլկար Եկեղեցւոյ պետին անեղծաստ մ'ի է տնօրինութիւն արտօնել։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՑԱՓԻՐԻԿ

Պերլինէ կը հեռագրուի առ Թայմս թէ Արեւելեան Ափրիկէի գերման զօրաց թիւը պիտի բարձրացուի 1,400հոգւոյն։ Գրէ թէ Գերմանիոյ գաղթային նախարարութիւնն առ այս պէտք եղած նոր դումարներն ուստէն գտած է։ Առանց Խորհրդարանի հաւանութեան սահմանադրական կառավարութիւն մը չի կրնար մ'ի է ծախք ընել։ Ելմտայոյցն դուրս ելեալ կարելի չէ։ Արդ, Ռայխսթակին դաղթային երմտացոյցի համար նշանակած դումարները չեն բաւեր նոր զօրաց առաքման։ Ուստի, կ'ըսուի թէ կայսերական կառավարութիւնն իւր վրայ առած է նոր ծախուց պատասխանատուութիւն, և Խորհրդարանը դումարելուն պէս օրինագիծ մը ժամուցանելով, իւր ըրածին վաւերացումը պիտի խնդրէ Խորհրդարանէն, ինչպէս ծայրագոյն պարագայից մէջ կը թոյլատրեն սահմանադրական կանոնք։

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՈՐԾԵՐ

Տարւոյս առաջին վեցամսէին մէջ ռուս Տէրութեան կառավարական հասոյթք արտադրած են 423,200,000 ր. որոյ 40½ միլիոն ր.ը սովորական հասոյթ։ Նոյն միջոցին կառավարական ծախքերն եղած են 406,600,000 ր., որոյ 396 ու կէս միլիոնը սովորական ծախք, որով այս առաջին վեցամսեայն 16,600,000 ր.ի հասոյթից առաւելութիւն մը կը ներկայէ։ Իսկ անցեալ տարւոյ առաջին վեցամսէին, ռուս Տէրութեան հասոյթք 427,300,000 ր., և ծախքերը 429,700,000 ր.էին, որով 2,400,00 ր.բաց մը կար։ Այս տարի անցեալ տարուան համեմատապէս Ռուսիոյ ելեւմտից յաջող վիճակին վերայ այս ծանօթութիւն բարեպատեհ ժամու մը կը արուի, յաջողցնելու համար ռուսական նոր փոխառութիւնը։

* * *

Վլատիվոսթոքէ (ռուսական նաւահանգիստ արեւելեան Սիպերիոյ, Խաղաղական Ովկիանոսին վրայ.) կը ծանուցուի թէ Ֆրանսական մարտանաւէ մը դուրս եկած նաւազ մը այն նաւահանգստին մօտ սպանուած է։ Վէյա-Ֆրանսական շրջուն մարտանաւն ի Վլատիվոսթոք դտնուած պահուն, սպայք սովոր էին շրջակայքը պտրտիլ։ Ռուսէս անուն ենթասպայ մը առանձին պտրտելու կ'երթայ, և նաւը չի դառնար։ Հետեւեալ օրը գինք կը փնտռեն, և դիակը կը գտնեն անտառի մը մէջ, բրնամեցեալ և խոցեալ։ Ոստիկանութիւնը կասկածեցաւ թէ Չինացիներ սպաներ են զանիկա։ Ռուսիոյ զինուորականք, քանի որ այն թուականի վիճակագիր մը կը յայտնէ թէ 100 հազար զինուորականաց վրայ 47 ինքնասպան եղած էին։ Այժէրիի մէջ գտնուող Ֆրանսացի զինուորականք կրկնապատիկ աւելի կը դիմեն ինքնասպանութեան։ Պէյժ բանակին մէջ այս հանմամանութիւն 24 է, անգլ. բանակին մէջ 23, ռուսականին մէջ 20, սպանիականին մէջ 14, միջա 100.000 զինուորականաց վրայ։

ՊՈՒԼԿԱՐԱԳԱՆ ԳՈՐԾԵՐ

Սոֆիայէ հակառակ աղբիւրէ կը ծանուցուի թէ անհամաձայնութիւնք կան Ֆերտինանտ իշխանին և Պ. Սթամպուլովի միջեւ, Եկզարք Տ. Եոսէֆ Արքեպիսկոպոսին նկատմամբ բռնուելիք ընթացից վրայ։ Նախարարապետը կ'ուզէ եղէր որ պուլկար կառավարութիւնն ինչ ինչ միջոցներ ձեռք առնու Եկեղեցութեան դէմ։ Բայց իշխանը, թէեւ կրօնով կաթոլիկ, չուզեր պուլկար Եկեղեցւոյ պետին անեղծաստ մ'ի է տնօրինութիւն արտօնել։

ԵՐԿՈՒ ԴԵՍՊԱՆՆԵՐ

Պ. տը Պրովից ուշագրաւ զուգադիպութիւն մը կ'ի համարի որ Ֆրանսա և Իտալիա միևնոյն ժամանակ նոր դեսպաններ կը դրկեն ի Կ. Պոլիս, Մանթէպէլլօ կոմսն ի Փեթերսպուրկ դրկելով և դՊառոն Պան եա կանչելով հարկ դատուած լինելով։ Իբրեւ ճարտար դիւանագէտներ Պ. Բանպոնի՝ Ֆրանսական նոր դեսպանին և Պ. Ռէսմանի՝ Իտալեան նոր դեսպանին գովեստը կ'ընէ Պ. տը Պրովից, և կը յարէ թէ անոնք պիտի լինին յաջողակ ներկայացուցիչներ՝ մին Երկեակ Նիզակակցութեան, միւսն Երբեակ Նիզակակցութեան Տէրութեանց կողմէ։

ՀԱՊԷՇԱՍՏԱՆ

Ֆրանսացի երկրախոյզ Պ. Էլուա Փիտան, որ Հապէշստանի մէջ երկար ճամբորդութիւններ բրած է, իրեն ուղղեալ հարցումներու ի պատասխանի, ըսաւ թէ Հապէշստանի վրայ Իտալիան թեւարկութիւնը կամ պաշտպանութիւնն առաստել մ'է լոկ։ «Մենելիք Կայսրը միշտ մերժած է Իտալացւոց կողմէ իրեն ուղղեալ ամենա ռաջարկութիւն։»

ԻՏԱԼԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՔ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆԱՑ

Զօր. Պուլանժէի ինքնասպանութիւնն օրուան խնդիր կ'ընէ եւրոպացի զինուորական դասերուն մէջ պատահած ինքնասպանութեանց յաճախութիւնը։ Ֆրանսացի զինուորական բժիշկ Տքթ. Լօնկէ, որ Ֆրանսայի պատերազմական նախարարութեան կողմէ իրեւ պատուիրակ ներկայ էր առողջապահութեան և ժողովրդագրութեան միջազգային ժողովոյն, շահեկան վիճակագրութիւն մը հաղորդեց, յորմէ կ'երեւի թէ ամենէն աւելի ինքնասպանութիւնք աւստրեան բանակին մէջ կը պատահին, ուր 100.000 զինուորականաց վրայ 122ն ինքնասպան եղած են, 1875 էն 1887։ Յետոյ գերման բանակը, 100.000 զօրաց վրայ 67 ինքնասպանք, 1878 էն 1888։ Ապա իտալեան բանակն, 40 ինքնասպանք առ մէն մի 100 հազար զինուորական, 1874էն 1888։ Զորրորդ է Ֆրանսական բանակն, 29 ինքնասպանք առ 100.000, 1872էն 1889։—1862էն 69, աւելի շատերը էին ինքնասպան Ֆրանսացի զինուորականք, քանի որ այն թուականի վիճակագիր մը կը յայտնէ թէ 100 հազար զինուորականաց վրայ 47 ինքնասպան եղած էին։ Այժէրիի մէջ գտնուող Ֆրանսացի զինուորականք կրկնապատիկ աւելի կը դիմեն ինքնասպանութեան։ Պէյժ բանակին մէջ այս հանմամանութիւն 24 է, անգլ. բանակին մէջ 23, ռուսականին մէջ 20, սպանիականին մէջ 14, միջա 100.000 զինուորականաց վրայ։

ԱՆԳԼԻԱՅԻՆ Ց'ԱՓԻՐԻԿ

Թայմս, Հարաւային Ափրիկէի բրիտանեան Ընկերութեան դժուարին կացութիւնը պարզելով, կ'ըսէ թէ Վիքթորիա Նիանգա լճին վրայ Գերմանաց կողմէ իրեն դէմ մղեալ մրցման պատճառաւ, անգլ. Ընկերութիւնն հարկադրեցաւ գրաւել Ուկանտայի ընդարձակ երկիրը, ծովեզերքէն 500 մղոն հեռի, և այս գրաւման առթիւ մեծամեծ ծախքեր իւր տրամադրելի դումարներն սպառած են։ Գերմանաց այս օրերս կրած պարտութենէն ետքը, Թայմս կ'ըսէ թէ ինքը մի պէտք է ընել որպէս զի անգլ. Ընկերութիւնն իւր կացութիւն կարենայ պահպանել։ զի Գերմանաց դէմ իրենց մասնակի յաջողութեամբ քաջալերեալ, Արաբք կրնան Անգլիացւոց դէմ ևս դործել, և եթէ անգլ. Ընկերութիւնը զօրաւոր չդտնուի, գերեւաց սրսայումն և տուրեւառը կը վերսկսին անվրէպ։ Թայմս, կամ

ԱՂՈՆԴՐ Ի ՌՈՒՍԻԱ

Նոր «կրոն» մը հաստատեցաւ ի Նիժնի Վլադիմիր, ի Ռուսիա, ըստ Թօլսթոյ վիպասանին վարդապետութեանց։ Նոր «կրօնին» հիմնադիրն է մեծաշարաստ մարդ մը, և ցայս վայր իրեն հետեւող աքք և կանայք յոյժ ուսեալ և զարդացեալ մտքի տէր անձինք են ամենքն ալ։ Ադանդապետն ինքնին կը շահագործէ իւր հողեր, աշխատութեամբ իւր հետեւողաց։ Ասոնք դիւզացիներուն սովորական կեանքը կը վարեն, անոնց հագուստն և սովորոյթներն ընդունած լինելով։ Երբ իրենց հողերուն վրայ դործ չդտնեն, աղարակներուն մէջ ծառայութեան կը մտնեն, կամ ձրիապէս կ'աշխատին դիւղացիներուն համար, զրոս իրենց դաւանութեան բերելու կ'աշխատին։ Նոր ադանդին մէջ կ'ուսուցուի թէ մարդկային ցեղին ապականութիւնն այնքան խորարմատ է որ դոյն բարեգործելու ամեն յոյս պէտք է թողուլ։ Բաղձալի եւ յուսալի միակ բանը մարդկութեան բնաջինջ անհետացումն է, և ասոր համար ամուսնութիւնը պէտք է բառնալ։ Ուստի, նոր ադանդին մէջ արք և կանայք իրարու հետ սեռական յարաբերութիւնէ կ'ըզդուշանան ամենայն երկիւղածութեամբ, ամուսնութիւն բացարձակ արդիլուած դալով։ Իրենց ձեռագործ աշխատութիւնն աւարտելնուն պէս կ'ըզբաղին Աւետարանը կարդալ և մեկնել ըստ Թօլսթոյի։ Ռուս իշխանութիւնք այս անբնական դաւանութեան տարածման երկիւղ չունենալով, առայժմ չեն միջամտեր արդելքներ յարուցանելով։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԻՔԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՀԵՆԴԿԱՍՏԱՆԻ

«Ն. Վեհափառութեան Վիքթորիա Կայսրուհւոյն կենսագրութիւնը», զոր Հ. Հ. Ֆէլրայա Վարմա, Թրավանքաբի «Վալիա Քոլի Թանսրան»ը շարադրած էր, մայայամ լեզուաւ ուսանուորի վերածուեցաւ մեսասան մայայամ բանասեղծից կանանց մը կողմէ։ Գերքուածն, 108 «ոլորտներէ բաղկացեալ, կը պատմէ Ն. Վեհափառութեան կեանքն ի մանկութենէ անտի։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Փարիզէ կը դրուի սնպտ. 26 թուով։

«Ամբերն որք անցեալ շաբթու մեր քաղաքական հորիզոնին վրայէն կ'անցնէին՝ անհետացան։ Լեհերէն կը ներկայացուի ընդհանուր անտարբերութեան մէջ. տեղ, և եթէ ներքուստ մեր կառավարութիւն քանի մը թշնամիներ աւելի ունեցաւ այս ճախող օրերային առթիւ, արտաքուստ իրեն պատիւ բերաւ այն կորով զոր ցոյց տուաւ այս առթիւ։ Երիցուրդի ճառը մոռցուեցաւ։ Ազգս Լուէնի անցագրաց ջնջումը լիովին դարմանեց այն ճառին անհաճոյ տպաւորութիւնը։ Լաստեսուիլեան օրուան տիրող կարծիքն է։ Սակարանի մարդիկ այս կարծիքը կ'արտայայտեն՝ յարաձուն բարձրացման գնոց։ Անգլիոյ Պանքայի զեղչին բարձրացումն իսկ այս բաստեսութեան չդպաւ։ Բայց հակառակն ալ զգուշանալու է։ Գիները կորոել ազգայնները գինեպատ չեն եղած։ Ամենափոքր դիպուածէն օգուտ պիտի քաղեն։ Խորհրդարանական վերարացումն իրենց ազատած առիթը պիտի ընձեռէ։ Կը ծանուցուի թէ պուլանժիստական Պ. Միլլուա հարցապնդում մը պիտի ընէ Ֆրանսայի և Պերիոյ յարաբերութեանց վրայ։ Թաղուած կրնաք համարել զայն, կամ լաւ եւս՝ կառավարութեան համար դիւրին յաղթութիւն մը։ Ծերակոյտին մէջ բողոքական հովիւ Պ. Տիտ պիտի քննադատէ նախարարութիւնը՝ կաթոլիկ կղերին հետ շատ ազէկ վարուելուն համար։ Այս յարձակում Պ. Միլլուայի յարձակումէն աւելի յաջողութեան հաւանականութիւն կ'ընծայէ։ Բայց Ծերակոյտն ընդդիմադիր կուսակցութեան անանպատ կրնա՞ն մ'է։ Նախարարութիւնք հոն ընդհանրապէս մեծամասնութիւն կը վայելէն։ Եթէ պիտի խնայ, Պ. տը Ֆրէսինէի նախարարութիւնն երեւս փոխանութեան քուէով պիտի խնայ։ Հաւանակա՞ն է որ խնայ—թէ բաւարապէս դատենք, պէտք է ըսենք թէ կանգուն պիտի մնայ դեռ բաւական ժամանակ, զի վերջին ժամանակներս անժխտելի յաջողութիւններ վայելեցին մեր նախարարք։ Բայց Խորհրդարանին մէջ անհամբերներ կան անհամար, յաչս որոց նախարարութեան մը երկար տեւելն իսկ է իւր մեծագոյն յանցանքն։ Եւ ծայրայեղ կուսակցութիւնք միշտ պատրաստ են միաբանիլ դժգոհներուն՝ նախարարութիւնը տապալելու համար։ Ուստի, Պ. տը Ֆրէսինէի կառավարութիւնն ո՛րչափ եւս յաղթական երեւի այս պահուս, շատ զգոյշ պէտք է վարուի որ չինայ խորհրդարանական մօտալուտ նստաշրջանի միջոցին։»

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Ռուսական նոր փոխառութիւնը միտքերը կ'զբաղեցնէ ի Պերլին։ Ամեն կարդի լրագիրք բացարձակ կը մերժեն գերման հասարակութեան մասնակցութիւնն այս փոխառութեան։ Լրագրաց այս մասնաւոր դրածները տեսակ մը ազգային բողոք կը կազմեն Ռուսիոյ երմտական վերջին դործողութեան դէմ։ Մինչեւ իսկ լրագիրք ոմանք կը քննադատեն գերման կառավարութիւնն՝ այս փոխառութեան հանդէպ «անտարոյդ, վարանամիտ, անհասկանալի» ընթացք մը բռնելուն համար։ Նոր Ցեյտէ Ամ. Զայտոնդ այս քննադատութեանց պատասխանելով, կը բացատրէ որ եթէ ուրիշ պարագաներու մէջ գերման կառավարութիւնն իւր հաւանութիւնը զլացած է գերման սեղանաւորութեան մասնակցութեան ռուսական փոխառութեանց, արդի պարագայից մէջ քաղաքական շահերն իրեն կը թելադրեն չեզոք դիրք մը։ Ինչպէս ուրիշ երկրաց մէջ, ի Գերման-

---

—)(59)(—

ԹԷՐԹՈՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐԿՈՐԴ

ՄԵԾ ՀԱՄԲԱՅՍԵՐԷՆ

—Ոչ, ոչ, Շարլօ, չեմ ուզեր, Շարլօ, չեմ ուզեր . . . բանտ պիտի դրկեն մեզի . . . հոն, դատաւորներն անմիջապէս պիտի իմանան մեր ի՛նչ ըլլալը։ Դուն նոյնէն գաղթականութեան պիտի դրկուիս, եւ զիս պիտի դատապարտեն իբր գող . . . Ոչ, չեմ ուզեր։

—Այո, իրաւունք ունիս . . . բայց պէտք է որ քալենք։ բոլորովին ընթացայ . . . դո՞ն։

—Ես ալ։

—Եւ այլեւս Ժանրքէնի օգին չունինք զօրանալու համար։ Բաղութիւն, Պերթինը, անշուշտ մարդաբնակ տուն մը պիտի գտնենք . . . մեր ճամբան պիտի ցուցնեն մեզի . . . եկու։

Եւ, խոնջ ու վաստակեալ, քաշքշուելով կ'երթան թաւուտներէն։

Զիւնը, քանի մը վայրկենէ ի վեր խոշոր հատիկներով կը տեղար։ Բոլորովին ծածկուած էին անոնք։ Դլխիկոր կ'երթային, իրարու ձեռքէ բռնած, դողդղալով, երկչոտ Լուսիթիւն կը պահէին։ Եթէ խօսիլ փորձէին, հիմակ պիտի սկսէին հեծկըլտալ։ Բայց մէկէնիմէկ Շարլօ կը սեղմէ Պերթինի բազուկը։ Երկու ճանչեր կը լսուին։ Հագիւ ժամանակ կունենան երեսի վրայ պառկիլ թաւուտներու մէջ, թաղուիլ գետնատարած բարձր պտերներու կոյտի մը մէջ որու տակ կը սողոսկին։

Եւ հոն կը մնան անտեսանելի։

Միայն Շարլօ կը յանդգնի գլուխը քիչ մը դուրս հանել ձիւնի այս սպիտակ գերեզմանէն և շուրջը կը դիտէ։

Կուզէ տեսնել։

Եթէ եկողները մաքսաւորներ չեն, եթէ գիւղացիներ կամ մաքսանենդեր են, իրենք պիտի ազատին։

Ձայները կը մօտենան։

Տանի չափ մարդեր կ'երեւին։ Իրենց մութ գոյն զգեստէն, որ գիշերուան մէջ սեւ կ'երեւի, իրենց հրացաններէն, Շարլօ կը ճանչնայ մաքսաւորները։

Բայց իրենց ընթացքը տարօրինակ է։

Երկուքն առիւէն կը քալեն հրացանին ուսընդանուած։ Անոնց ետեւէն չորս մարդեր պատդարակ մը կը տանին, որ չինուած է ծառերու հիւսուած տերեւներով։

Եւ այս պատդարակին վրայ մարդ մը տարածուած է։

Այս թափոր մահաստուեր երեւոյթ մը ունի։

Զորս պատդարակակիրք համաչափ քայլերով կը քալեն և իրենց հրացաններ կը տատանին և կը ցատքեն մէն մի քայլափոխի։

Այդ տեղ տարածուած մարդն ովի է, իրենցմէ մի՞ն։

Շարլօ տակաւին չի կրնար տեսնել։ Շատ հեռու են։ Բայց իր մտքէն, չատ մտքէն պիտի անցնին և այն ատեն պիտի որոշէ։

Եթէ մաքսաւորք չուն մը ունեցած ըլլային հետերնին, տղայք երեւան ելած, կորսուած էին։

Բայց Ռոնֆլոյի դիակը փռուած կը մնար անտառին խորը՝ արդէն ձիւնով ծածկուած։

Այս բանս զանոնք փրկեց։

Մաքսաւորք անցան, չի կասկածելով անոնց ներկայութենէն։

Եւ Շարլօ, զարհուրած, որ ճանչցած էր պատդարակին վրայի մարդուն բաց և արիւնալիր բերնով տժգոյն դէմքն և կապարէ մը ջախջախուած գանկն, Շարլօ, թոթովելով, կը մրմռար իր բարեկամուհւոյն ականջին։

—Պերթի՛ն, Պերթի՛ն, Ժանրքէնը սպանե՞ր են։

Իրա՞ւ էր։ Ժանրքէն մեռած էր։ Բիմբերլօ սոսկալի կերպով կատղեր էր Ռոնֆլոյի դիակը գտնելով։ Մարդու մը չափ կը սիրէր այս չունը։ Զայրոյթը զայն կուրցուց, բոլոր բանականութիւնն հեռացուց անկից։ Լայնափող հրացանին մէջ գնտակ մը սահեցուց, եւ երբ Բարկեոն հեռուն անտառին մէջ կը ցատքտէր, անոր վրայ քալած էր։ Շունը գլորեցաւ, կանգնեցաւ, նորէն գլորեցաւ, յետոյ, քաշքշուելով, անհետացաւ թաւուտին մէջ ոռնալով։

—Հեռուն չպիտի երթայ, ըսաւ Բիմբերլօ։

Եւ երկրորդ գնտակ մը սահեցուց։

Հակառակ մութին, կրցած էր Բարկեոնը ճանչնալ։ Արդէն ձիւնին վրայ երեւան եկած հետքերն իր կասկածն արթնցուցած էին թէ իր առջև, անտառին մէջ կը գտնուէր Ժանրքէն։ Ուրեմն Ժանրքէնն էր Ռոնֆլոյի կողերը ջախջախողը։

Ցանդուգն մաքսանենգն այս անգամ ևս իր թշնամւոյ ձեռքէն պիտի ազատէր եթէ պաշարուած չըլլար։ Մաքսաւորներու երիտ գլխն իր վրայ կը սեղմուէին, մին՝ դէպ յառաջ, միւսը՝ դէպի ետեւ։ Սահմանագլխին վրայ սովորական ռազմագիտութիւն մըն էր այս։ Ժանրքէն գիտէր զայդ, բայց այդ գիշեր կարծեր էր թէ անկից վախնալու տեղի չունի։

Այս իսկ եղաւ իր կորստեան պատճառը։

Շարունակ վազելով, բեռը միշտ քամակին վրայ, Բիմբերլօյի բռնած էր։ Յարձակումն այնքան անակնկալ եղած էր որ տասնապետը, յանկարծակիի եկած, ձիւնին մէջ գլորուած էր։

Բայց նորէն ոտք ելաւ և կրակ բրաւ, գրեթէ ըստ բախտի, առանց նշան առնելու։

Գնտակը Ժանրքէնի գանկին զարնուելով՝ ոսկրատ մէկ մասը վերցուց հանեց։

Մաքսանենգն ինկաւ, առանց ձիչ մը արձակելու։

Բարկեոն անհետացած էր և Ժանրքէն մեռած։ Երկու պզտիկները անշարժ, դայլ կը կրկնէին ի ներքուստ։ Ինքգինքին յանկարծ նետուած կը տեսնէին ադտներու շարքի մը մէջ։

Սոսկալի ահուդող մը սեղմեց անոնց սիրտը։

Երբ մաքսաւորք անցան, եւ ա՛լ բան մը չի լսուեցաւ, Շարլօ մրմնջեց։

—Եկո՛ւ, Պերթին, եկու։

Բայց մանկամարդ աղջիկը տկար ձայնիւ մը։

—Ոչ, չատ կը վախնամ . . . և յետոյ, հոս, ձիւնին տակ կը հանգչիմ . . . ինձի այնպէս կուգայ որ կը տաքնամ . . . քնանալու փափագ ունիմ . . . եթէ կարենայի քնանալ՝ պիտի ազէկնայի, և յետոյ երկար առեն պիտի քալէի։

—Ոչ, ոչ . . . մի քնանար . . . գրքի մը մէջ կարդացած եմ որ չատ վտանգաւոր բան է այդ . . . դիմայիր . . . եկու . . . մտիկ ըրէ ինձի, Պերթին, մտիկ ըրէ՛։

—Ոչ, հաւատա, Շարլօ . . . երջանիկ եմ։

Պերթին պառկած էր ձիւնին մէջ։ Պըտերք, ցորտէն կոտրելով, կ'ինչպէս ա նոր ճաղուկ մարմնոյն վրայ՝ սառուցեալ թուփի պէս։ Եւ կուռ ձիւնն որ անվերջանալի կերպիւ կուգար ծառոյ բարձունքէն, քիչ քիչ իր ջինջ վագկայով կը ծածկէր զանոնք։ Իրաւ էր։ Պերթին տարօրինակ հեշտութիւն մը կը զգար, որուն նը մանը կեանքին մէջ չէր զգացած։ Մեծ քաղցրութիւն մը կը ծաւալէր ի նա, բոլոր անդամներուն մէջ։ Ոտքերը չատ տաք էին։

Զուգոց տեղէն չարժիլ։

Եւ Շարլօ, ինք եւս, կը սկսէր զգալ ընթարմացման միեւնոյն տարօրինակ նշանները։ Քիչ մը առաջ ոտքի ելած էր և Պերթինը բազուկէն քաշելով, փորձած էր զայն ստիպել որ անշարժութենէն դուրս ելնէ։

Եւ հիմակ, անոր պէս տեղի կուտար խոնջէնքի, այն մեծ տկարութեան որ յառաջ կուգայ միշտ բուռն յուզումներէ, գիշերուան՝ որ իր խորհուրդովը զանոնք կը չրջապատէր և կը սպառնար անոնց, եւ Պերթինի օրինակին՝ որ երջանիկ կը թուէր ըլլալ և որուն ժպիտը կ'ըսէր իրեն.

—Իմ քովս պառկէ։ Ինձի պէս ըրէ . . . քնացիր։

Ցոյն կը նստի և կամաց մը կը պառկի աղջկան քովը, որ անոր ձեռները կը փընտռէ դժուարութեամբ։ Պերթին արդէն ընթարմացած էր . . . և այսպէս մնացին։

—Այո, կ'ըսէր Շարլօ, սասկի աղէկ է, և սակայն կ'ըսեն թէ ձիւնին մէջ մարդ կը մեռնի։

—Մահը թող գայ, Շարլօս, չատ գոհ չենք մեր կեանքէն։ Ամեն տեղ թշուառ եղած ենք։ Ցանցանքը մերը չէ։ Ուստի, եթէ մեռնինք՝ պիտի հանգստանանք։ Ալ բան մը չպի

նիա եւս այս անգամ ժողովուրդն ինքնին պէտք է որոշէ թէ պէտք է մասնակցիլ թէ ոչ այս օտար փոխառութեան։ Կառավարութեան կարծիքը պէտք չէ հարցուլ։

Ըստ նորագոյն լրոց, գերման հասարակութեան տհաճութեան առիթ, որոշուած է ռուսական փոխառութիւնն ի Պերլին հանրային ստորագրման ներկայացնել։

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՔ ԵԳԻՊՏՈՍԻ

Եգիպտոսի հանրային պարտուց անուանական գումարն էր 1890 դեկտ. 31ին 106 միլիոն 802,360 եգիպտական ոսկի, որ տարեկան 4,038,023 եգիպտ. ոսկի տոկոս կը բերէ, մինչ 1886ին այս տոկոս 4,284,913 ոսկի էր, և 1889ին 4,307,567 ոսկի։

Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Եգիպտոսի մաքսատան դեր-անօրէն Պ. Ճոն Օրնսթայն, որ արձակուրդով Պարսկաստան գացած էր, վերջնապէս ընդունեց պարսկական ծխախոտից նորահաստատ Ռեժիին ընդհանուր տնօրէնի պաշտօնը։

ԲՈՄԲԱԿ

Ալեքսանդրիայէ կը ծանուցուի թէ Ափրիկէի ներսերը մեծաքանակ բոմբակ կը բուսնի վայրի վիճակի մէջ, և եթէ Ափրիկէի ներսերը բացուին եւրոպեան վաճառականութեան առջեւ, այս բամբակի մշակումն և արտածումը մեծապէս կրնան զարգանալ, եւ ներքին Ափրիկէ այս շահաւէտ բերքի արտադրութեան մասին կրնայ հզօր մրցակից մը լինել այն երկրաց դէմ որք այժմ իրենց մենաւաճառ ըրած են բամբակը։

ԼՈՐՕ ԲԼԱՆՈՒԼԵԸՄ

Անգլիացի պատուական ծովակալն Լորտ Բլանուլեըմ, որ այնքան շքեղ ընդունելութիւն ըրաւ Փրանսական նաւատորմին ի Փորթսմութ, և չատ համակրելի եղաւ ծէրվէ ծովակալին մարդոց, այս օրերս հեռաքքրքրաշարժ արկած մ'ունեցաւ։

Տօթագին գիշեր մը, չատ թեթեւ հագուստ մը հագած, ի Լոնտոն, Պէլկրէյվ Սքուէյրի ազնուապետական թաղին մէջ իւր բնակարանին առջեւ սիկար կը ծխէր, երբ պանդուխ ոստիկան կասկածի երթալով այս կերպ հագուած մարդու մը գիշեր ժամանակ այն հարուստ տան առջեւ կենալուն համար, հարցուց։

—Ի՞նչ գործ ունիք հոգ։ Դուք այդ տունի՞ն կը վերաբերիք։

—Ո՛չ, տո՛ւնն ինձ կը վերաբերի։

Պ. ՔՈՌՆՕ

Պ. Ռիպօ, որոյ առաջին ճառն ի Պարօմ այնքան համակրալից արձագանգ գտաւ ընդ համայն եւրոպա, երկրորդ բանախօսութիւն մ'ընելով մի և նոյն առթիւ, (Ֆէտերպ զօրավարին արձանին կառուցումը,) ծանոյց թէ այս գեղեցիկ հանդէսին վրայ մեծաւ հաճութեամբ իւր տեղեկագիրը պիտի մատուցանէ Հանրապետութեան Նախագահին։ «Ո՛չ ոք ինձմէ աղէկ գիտէ թէ Պ. Քառնօ ո՛րչափ մեծ բաժին ունի յարգանաց և վստահութեան ապացոյցներուն մէջ զորս արդ ֆրանսական կառավարութիւնը կ'ընդունի ամէն կողմէ։ Բովանդակ եւրոպիոյ մէջ, չկայ Պետութեան գլուխ մը որ քան զֆրանսական Հանրապետութեան Նախագահն աւելի յարգանք վայելէ»։

ՕՐԻՆԱՒՈՐ ՏԻԿԻՆ ՊՈՒԼԱՆԺԷ

Սգակիր կին մը կայ, (որ արդէն քանի մը տարիէ հետէ սգոյից է,) առ որ պիտի ուղղուին այս պահուս ամենուս ակնարկները՝ յարգալից և գորովալից։ Այս է զօրավարին կինն։ Իրրեւ կին, իրրեւ ամուսին և իրրեւ մայր իւր արժանապատուութեան մէջ չարաչար մտրակեալ վիրաւորեալ, այս մեկուսի ապրեցաւ, ի Վերսալ, իւր անգրանիկ դստեր հետ, աշխարհէն հեռի, ամբոխին զրոյցներէն և չարախօսութիւններէն փախչելով, հանգարտ, արժանաւոր, ուրբ կենօք ապրեցաւ, ամէն դժբախտութեանց և սրտեղութեանց դէմ աղօթելով։ Այս կնոջ վերջին գործն եղաւ ներողութեան դիմում մը։ Քիչ ժամանակ ետքը տիկին Պոնվէնի մահէն (այն հոմանուշեայն որուն անձնատուր եղած էր Պուլանժէ), օրինաւոր տիկին Պուլանժէ փութաց գրել զօրավարին թէ ինք ամենայն ինչ կը մոռնայ, և եթէ այրն հաճի, հաւատարիմ կնոջ պարտականութիւն կը համարի գալ իւր քով, աքսորի տառապանքն իրեն հետ կրելու։

Այս նամակին պատասխան չեկաւ։

(Ֆիգարօ։)

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԻԹԱԼԱՆՈՒՀՈՒՈՅՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Զարին եղբայր Փաւել մեծ-դուքս այնքան խորին ցաւ զգաց իւր գեղանի մանկամարդ կնոջ մահուան պատճառաւ որ քանիցս մարեցաւ ինկաւ, և ամենայն աճապարանօք բժիշկ կանչուեցաւ։ Պէտք եղած դարմաններն ընելէն ետեւ, բժիշկն հարկ դատեց պահ մը մնալ այրիացեալ ամուսնոյն քով։

ՌՈՒՄԱՆԻԱ

Այս պահուս յոյժ կարեւոր բանակցութիւնք կը կատարուին եղեր Վիեննայի և Պուքրէշի միջեւ։ Ռումանիոյ Երրեակ Ղիզակցութեան յաբրիկը կ'ուզուի եղեր։

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ ԶԻԲԱԿՈՅԻ

Զիբակո քաղաքը փառաւոր հացկերոյթի մը տուաւ անցեալ երեքշաբթի գիշերը ի պատիւ եւրոպացի կառավարական պատուիրակաց, որք հոն եկած էին կազմակերպելու իրենց երկրաց մասնակցութիւնը Զիբակոյի արուեստահանդիսին։ Գլխաւոր քաղաքացիներէն 300 անձինք եւս ներկայ էին, և Զիբակոյի մէջ ուր այնքան չքեղ հացկերոյթք տեղի ունեցած են, այս խնճոյք աննման կը նկատուի։ Անդլ. պատուիրակներն իրենց գործը վերջացուցած լինելով Անդլիա դարձան։ Ամերիկացիք մեծաւ գոհութեամբ կը տեսնեն որ Անդլիա յոյժ ընդարձակ մասնակցութիւն մը կ'ունենայ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Քաղաքական ժողովն, իւր վերջին նստին մէջ սեպուհ խորհուրդները կազմելուն առթիւ, զրաղեցաւ նաև Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան արդի վիճակին քննութեամբ։ Ժողովը փափաքեցաւ Սահմանադրութեան արամադրութիւնը գործադրել, վերակազմելով Հոգաբարձութիւն մը որ պարունակէ նաեւ երկու բժիշկ անդամներ։ Բայց որովհետեւ Հոգաբարձութեան ատենապետ Մ. Իքպալ էֆ. Յակոբեան և դանձապետ Տիգրան էֆ. Կիւմիւշկիրտան իրենց առողջութիւնը դարմանելու համար յեւրոպա կը դիմեն, Քաղաքական ժողովն հարկ դատեց այդ էֆէնտիներու վերադարձին սպասել, և անոնց հետ խորհրդակցութեամբ վերակազմել Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն, յորում այս Ազնուաշուք Տեարք բազում տարիներէ հետէ անձնուիրապէս ծառայած են։

* * *

Բազմաթիւ հայ բժիշկներու ստորագրութեամբ պատրաստեալ գիրը զոր շաբաթ օրը ծանուցինք, կը վերաբերի Ազգ. Հիւանդանոցի վիճակին և թէպէտ տակաւին չէ մտուցեալ Ամն. Ս. Պատրիարք Հօր, բայց ի մօտոյ պիտի ներկայացուի, հաւանօրէն Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենապետին և Դանձապետին Եւրոպայէ դարձէն ետքն։ Այս գրով, որոյ ներքեւ կը տեսնուին Հիւանդանոցի նախորդ բժշկապետ Տքթ. Հիւնքեարպէյլէնեանի, Տքթ. Խորասանճեան էֆէնտիի, Տքթ. Տիգրան փաշա Փէչտիմաճեանի, Տքթ. Ստեփան փաշայի և այլոց ստորագրութիւնք, ուշադրութիւն կը հրաւիրուի Հիւանդանոցի բժշկական մասին թերութեանց վրայ, բաղդատմամբ եւրոպական կատարելութեանց, կ'առաջարկուի՝ ըստ Սահմանադրութեան՝ բժիշկ հոգաբարձուներու անուանումը, միանգամայն կը պարզուի բժշկական արտաքին հսկողութեան դրութիւն մը, զոր ստորագրող բժիշկք անձնուիրապէս յանձն կ'առնուն կատարել, եթէ իրենց դիտողութիւնք նկատողութեան առնուին, և եթէ բժշկական մասին աւելի կարեւորութիւն ընծայուի, ինչպէս արժան է։

Քաղաքական ժողովոյ ատենապետ Վահ. Մաքսուտ Սիմոն պէյ չարաթ առաւօտ Ոսմանեանութեան նախարար Վահ. Նազրմ պէյի ապարանքն երթալով ի Պոլիս, տեսակցութիւն մը ունեցաւ Ն. Վահութեան հետ։

Ազգ. Վարչութեան խառն ժողովն յառաջիկայ չորեքշաբթի օրուան համար հրաւիրեալ է իւր առաջին նիստը կազմել ի խորհրդարան Ղալաթիոյ։

Նախ քան զխառն ժողովն, Քաղաքական ժողովն ի նիստ պիտի դուսարի։

Թիֆլիզի լրագիրներէն՝

Մենք լսում ենք որ Էջմիածնի Սինոդը արգելել է հայոց դպրոցներում Ղազարոս Աղայեանցի դասագրքերի գործածելը։ Դրա պատճառը գլխաւորապէս Աղայեանցի Նորաձեւ հայերէն ուղղութիւնն է։ Եւ իրաւ, մեք չատ բարձր ենք դասում Աղայեանի աղանդը, որպէս ժողովրդական գրողի, բայց նրա հայերէն նորաձեւ ուղղագրութիւնը մատերեալ սխալ և վնասակար ենք համարում։ Դեռ մեծ բան չէ եթէ բայերի կրաւորական ձեւի մէջ փոխանակ վ. տառի գործ կածվ ւ. տառը, բայց սղաւաղել հայոց բառերի արմատները, նոր տառագարձութիւն մտցնել արմատական բառերի մէջ,—ոչ օգնի ներելի չէ։ Աղայեանց գրում է. Աստուած, դժւար, նւագարան, և այլն։ Եւ ահա այդ անճոռնի ուղղագրութեանը սկսել են հետեւել Տաղ և Աղբիւր չաթաթերթերից յետոյ՝ Մաքրի և զանազան փոքրիկ գրքոյկների անգրագէտ հրատարակողներ։

—Սարկաւագ Ց. Նազարեանց խնդրում է մեզ հրատարակել հետեւեալը. «Արդէն տպագրվում է և իր ժամանակին լոյս կը տեսնի մեր կազմած յառաջիկայ 1892 թվի օրացոյցը, հարուստ բովանդակութեամբ»։

—Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը սորին դասատուներուն ռուսերէնի դասերը յանձնեց բանասէր Պ. Ց. Յովհաննիսեանին, որ մասնագէտ լեզուաբան է և քաջ ծանօթ ռուսաց գրականութեան։ Զարմանալի է, որ հոգաբարձութիւնը բարձր դասարանի ռուսաց լեզուի եւ գրականութեան դասերը մի հրաւարանի է տալիս, մինչդեռ ունի լեզուաբան և մատենագէտ ուսուցիչ։

ՕՐ. ՄԱՔՐՈՒՀԻ ԷՄԻՐԶԵԱՆ

ԲՈՑԸ

ԷՄԻՐԶԵԱՆ ՀԱՄԲԻԿ ԷՖԷՆԴԻ ԵՒ ՔԵՌՈՐԻԵ ԻՒԹԻՒՃԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆԴԻ

Կնքեաց զիւր մահկանացուն ի ծաղիկ հասակի, ի խոր սուգ համակելով զիւր հարազատս՝ մօրեղբայրն և համայն մերձաւորներն։

Ցուզարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղն, երեքշաբթի, առաւօտեան ժամը 4ին ի Մայր-եկեղեցւոյ Գուլ-Գարուի ուստից հանգուցելոյն մարմինը պիտի փոխադրի յէտիրնէ Գարու, իւր նախնեաց դամբարանը։

Կ. Պոլիս, 23 սեպտ. 1891 (Հ. Տ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԵՐ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆԵՐ

Քարբերդի կուսակալ անուանեցաւ Բէուֆ փաշա, կուսակալ Բաղէշի։

Բաղէշի կուսակալ անուանեցաւ Թահսին փաշա, նախկին կուսակալ Մուսուլի։

Մանասդիրի Տէպրէի Զիր գաւառակին գայմագամ անուանեցաւ Հիւսէյին Խայրէտտին էֆէնտի, նախկին գայմագամ Պօր գաւառակի։

Հիճազի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Խայրի էֆէնտի, նախորդ Տէֆթէրտար Եէմէնի։

Գոնեաի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Մէհմէտ էֆէնտի, հաշուական թաղապետութեան Ա. շրջանակին։

Պաղտատի Տէֆթէրտար անուանեցաւ Բիֆաթ պէյ, Տէֆթէրտար Վանայ։

Պասրայի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Ճէվալ պէյ, Տէֆթէրտար Պաղտատի։

Կրէտէի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Լաատ էֆէնտի, Տէֆթէրտար Գոնեաի։

Տրապիզոնի նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Լէվին պէյ, Տէֆթէրտար Կրէտէի։

Վանայ նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Գասրի էֆէնտի, Տէֆթէրտար Տրապիզոնի։

Կարնոյ նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Սապիհ էֆէնտի, Տէֆթէրտար Պասրայի։

Բեղրսպուրկի Օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար անուանեցաւ՝ արտաքին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Ալի Ֆուատ պէյ։

Բարտիֆի օսմանեան հիւպատոս անուանեցաւ Ճէլալ պէյ, օսմանեան հիւպատոս Սամսունի, և այս վերջինն յաջորդեց Ֆէյզի էֆէնտի, օսմանեան հիւպատոս Բարտիֆի։

Ֆէրիդութեան ատենեան տուեցաւ Դ. զօրաբանակին հեծելազօրաց չորրորդ զօրաբաժնին նորընծայ հրամանատար Էսհէմ փաշայի։

Երրորդ կարգի Օսմանիէ պատուանշան տուեցաւ Դերմանացի զինուորական գրագէտ դերձակապետ Պ. Ժահէնի։

Ի ԿԱՅՍ. ՊՈԼԱՍ

Բարձր. Մեծ-եպարքոսը շաբաթ օրը կայս. պալատ գնաց և ստացաւ Վահ. Սուլթանի հրամանները։

—Մուսուլի նախկին կուսակալ Թահսին փաշա, որ Բաղէշի կուսակալ անուանուած է, երէկ կայս. պալատ գնաց և շնորհակալութիւն մատուցանելով, արժանացաւ կայս. մեծարանաց։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Նախարարաց Խորհուրդն իւր երեկի նստին մէջ զբաղեցաւ ներքին գործոց վերաբերեալ կարեւոր խնդիրներով ինչպէս նաեւ՝ Դամասկոսէն Աքէա չնուելիք երկաթուղւոյն համար Պ. Բիլինկի խնդրած մենաշնորհին վերաբերեալ թղթոց քննութեամբը։

—Իտալական դեսպանատան գործակատարը չարաթ օրը Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Բարձր. Մեծ-եպարքոսին, Արտաքին գործոց Վահ. նախարարին և Վահ. խորհրդականին հետ։

ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կ'ըսուի թէ կայս. կառավարութիւնը մտադիր է մեծ չէնք մը կառուցանել տալ ի Սարայ-Պուրնու, բժշկական վարժարանը հոն փոխադրելու համար։

ՐԷՈՒՖ ՓԱՇԱ

Բաղէշի կուսակալ Ռէուֆ փաշա, որ Քարբերդի կուսակալ անուանուած է, հրաման ստացած ըլլալով իւր նոր պաշտօնատեղին ուղեւորիլ, այսօր Բագիշէն ճամբայ պիտի ելնէ դէպի Քարբերդ։

ԺԱՄԱՆՈՒՄՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Ֆրանսական նոր դեսպան Պ. Քանպոն շաբաթ օրն ընտանեօք մայրաքաղաքս հասաւ ճեպընթաց կառախումբով որ ճիշդ եւրոպական ժամ չորսին ժամանեց Սիրքէճիի կայարանը ուր խուռն բազմութիւն կը սպասէր Պ. Քանպոնի գալստեան։

Դեսպանին հետ էին իւր կինը, որ հանդուցեալ զօրավար Կերբրի դուստրն է, զոքանչը, որդին և Արտաքին գործոց Նախարարութեան արքունական թարգմանչաց պետ Իպրահիմ պէյ որ ի Մուսթաֆա-Բաշա գացեր էր ընդ առաջ Պ. Քանպոնի։

Դեսպանատան պաշտօնէից կողմէ խոշոր ծաղկեփունջ մը մատուցուեցաւ առ տիկին Քանպոն։

Կայարանը կային դեսպանական պաշտօնեայք, Բէրլէյ նաւուն հինգ սպայները, որոց մին կը կրէր Թօնքինի միտալը, զինուորական կցորդ Պ. Պէրժէ, որ նոր ստացած հազարապետի աստիճանին համազգեստն հագած էր, ֆրանսական գաղթականութեան երեւելիք՝ Պ. տը Լօնժէվիլ, Կրանիէ, Վիթալիս փաշա, Թուսթէն Տիւմանուար փաշա, Պապական Նուիրակ Տ. Պոնէլթի՝ ընկերակցութեամբ Լազարիսթ վարդապետներու, սպանիական դեսպան Պ. Բիւլթա, և այլք։

Դեսպանատան առաջին պաշտօնեայ Պ. տը Լօժիէ Վիլար մի առ մի ներկայացուց ներկայ եղողները։ Պ. Քանպոն, որ ժպիտ ի շրթունս կ'ընդունէր իրեն ներկայացուող անձերը, մի քանի վայրկեան խօսեցաւ Տ. Պօնէլթիի հետ։

Կայարանին մէջ, Իպրահիմ պէյ, սիրալիր խօսակցութենէ մը յետոյ, բաժնուեցաւ դեսպանէն։ Պ. Քանպոն, իւր ուղեկիցք և հետեւորդք դեսպանատան կողմէ զրկուած կառքերով ուղղակի Բերա դնացին։ Կայարանին մէջ կը դտնուէր, հարիւրապետի մը հրամանին ներքեւ, զօրաց խումբ մը որ դեսպանի անցնելու պահուն զինուորական բարեւի կեցաւ։

* * *

Երէկ, Պ. Քանպոն՝ ընկերակցութեամբ դեսպանատան գործակատարին ու առաջին թարգմանին՝ Արտաքին գործոց նախարար Սալիհ փաշայի ապարանքը դնաց ի նշան Թաշ եւ Ն. Վահութեան յանձնեց իւր յանձնարարագրերու ինչպէս նաեւ Վահ. Սուլթանի ներկայութեան արտասանելիք բանախօսութեան պատճէնները։

* * *

Պ. Բօլ Քանպոն ծնած է 1843ին, հետեւապէս 48 տարեկան է այժմ։ Պ. Քանպոն թոռն է ժողէֆ Քանպոնի, առաջին Հանրապետութեան նշանաւորագոյն դէմքերէ մին, որ քանիցս նախագահութեան բարձր պաշտօնին հասած է և ժամանակակիցն եղած է Հանրապետութեան արդի նախագահին պապուն՝ Լազար Քառնոյի։ Ժողէֆ Քանպոն 1793ին նշանաւոր տեղեկագիր մը խմբագրած է, որ յոյժ նպաստած է Ֆրանսայի երկրական կացութեան վերահաստատման։

Պ. Բօլ Քանպոն նշանաւոր փաստաբան մըն էր երբ 1870 սեպտ. 4ի դէպքերը ծագեցան։ Պ. Ժիւլ Սիմոն, այդ թուականի վարչութեան գլխաւոր անդամներէ մին, քարտուղար կարգեց զնա և գնահատելով Պ. Քանպոնի մտաւորական մեծ կարողութիւնը՝ վարչական ասպարէզին մէջ մտցուց Ալբ Մաւրիթիի նահանգին քաղաքապետութեան ընդհանուր քարտուղար անուանելով զայն։ Ապա Պուշտիւրնէի Ֆրանսայի հիւսիսի կարեւոր նահանգաց մէջ կառավարչի պաշտօններ վարելէ ետք մեծ արժանաւորութեամբ Պ. Քանպոն 1882ին Թունուզի Պէյլին մօտ զրկուեցաւ իբրեւ ֆրանսական լիազօր դեսպան։

Այդ թուականին գժտութիւններ ունեցաւ զօրավար Պուլանժէի հետ որուն աղմկայոյզ գործունէութիւնն իրեն չէր յարմարեր և որուն փառատենչ դիտումները կը նախազգար։ Այս դէպքին հետեւանքն է որ կառավարութիւնը գնահատելով իւր դեսպանին ընթացքը, Պատուոյ Լեգէոնի պատուանշանի առաջին աստիճանը շնորհեց նմա։ 1886ին, Պ. Քանպոն Մատրիտի ֆրանսական դեսպան անուանեցաւ, ուր ամենայաւ յիշատակներ ձգեցաւ։ Սպանիոյ խնամակալ-թագուհին մեծ վստահութիւն ունէր ի նա և իր գոհունակութիւնն յայտնած է՝ նուիրելով նմա Սպանիոյ Բարլոս Գ.ի մանեակի մեծ պատուանշանը։

Ֆրանսական նոր դեսպանը հմուտ դրագէտ մըն է, որ իր անտեսագիտական և այլ ուսումնասիրութիւններովն արժանացած է անդամ ընտրուիլ Ֆրանսական Կաճառին «բարոյական և քաղաքական գիտութեանց» ճիւղին։ Իբր սոսկական անձ՝ Պ. Քանպոն յոյժ համակիր բնաւորութիւն մը ունի։ Ամուսնացած է Կէբրա զօրավարին աղջկան հետ և մանչ զաւակ մը ունեցած է որ տասն վեց տարեկան է այժմ։

Պ. Քանպոն, միջահասակ, տկարակազմ անձ մ'է։ մազերն ու կարուած մօրուքը սպիտակհատն են, աչքերը կապուտակագոյն։ Համակրելի դէմք մը ունի։ Դեղցիկ ճակատը, շրթանց շարժումը, աչքերուն նուրբ նայուածքը յայտնի կընեն որ հաստատամիտ ու զօրաւոր հոգւոյ տէր է։

1890ի ամրան, Պ. Քանպոն մայրաքաղաքս այցելած է արդէն, ուր շաբաթ մը հիւրընկալուած է Ֆրանսական դեսպանատան մէջ ի Թարապիա։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, սեպտեմբեր 19էն մինչեւ 20, Հալէպի ու Իսկենտէրունի մէջ հընտասանք մէկ մէկ մահեր պատահեր են իսկ սեպտեմբեր 20էն մինչեւ 21՝ Հալէպի մէջ՝ մէկ։

ՀԱՍՈՑԹԻ ՆՈՐ ԱՂԲԻՒՐ ՄԸ

Գօսօվայի հեռագրական և թղթատարական տնօրէն Ճավիտ պէյ ուրիշ մէկ քանի պաշտօնէից հետ ծրագիր մը պատրաստելով մատուցած են Հանրային Պարտուց վարչութեան Սէլանիկի ճիւղին։ Այդ ծրագրով ցոյց տրուած են տարեկան 50—60,000 ոսկւոյ հասոյթի նոր աղբիւր մը, որ կը վերաբերի Հանրային Պարտուց թղթեալ հասուցից վարչութեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կայս. բժշկական ընկերութեան ուրբաթ դիշերուան նստին մէջ, Տոքթ. Գամպուրոյլու, բժշկապետ դերմանական հիւանդանոցին Բերայի, ուշադրութեան արժանի զեկոյց մը ըրաւ։ Ութ օրուան մէջ այդ հիւանդանոցն ընդունուած են փոդայաւէ բռնուած 14 տղայք։ ասոնք ամենքն ալ Ղալաթիոյ Բէյէր-Ալթը թաղէն կուգան, ուր կը բնակին Ռուսիայէն դաղթող հրեայք։ Այդ կեղտոտ թաղին մէջ ծաղկախտն ևս բաւական կատաղած են։

Վահ. Մավրոյէնի փաշայի առաջարկութեամբ, ժողովն որոշեց իսկոյն դիր մը ուղղել առ Բարձր. Մեծ-եպարքոսն, խնդրելով որ առողջապահական ժողովն հրաւիրուի միջոցներ ձեռք առնուլ արդիլելու համար ծաւալումն այդ տարափոխիկ հիւանդութեանց որք հնտախին չափ վտանգաւոր են։

Տոքթ. Գամպուրոյլու ժողովոյն հաղորդեց միանգամայն թէ գերմանական հիւանդանոցին մէջ ծառայող դիւթութեան քոյրերէն Ֆիլիկս՝ որուն յանձնուած էր փոդայաւէ բռնուողներու հսկողութիւնն, ինքն ալ վարակուելով՝ մեռեր է։

ՀԲԵԱՌ ԳԱՂԹԱԿԱՆՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլսէն Լէնպէճնամէ Պլէտ լրագրոյն ուղղեալ նամակ մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ. — «Այս միջոցիս Կ. Պոլսոյ մէջ հազարուս հրեայք կան որք Պառնս տը Հիրշի ծախիւբ կ'ապրին։ Սորա գործակալք Ղալաթիոյ մէջ նպաստամատոյց յանձնաժողով մը կազմած են որ կզբաղի միանգամայն անոնց տեղաւորմամբ։ Իւրաքանչիւր գաղթական կ'ստանայ օրական կէս ֆրանք, իսկ տղայք՝ 25 ական սանտիմ։ Վերոյիշեալ կէս ֆրանքէն զատ, այդ հրէից իւրաքանչիւրը կ'ստանայ օրական 25 սանտիմ, իբր բնակարանի վարձք, եթէ մասնախմբին կողմէ բնակարան տրուած չէ։ Մասնախումբը չարաթը 1000 ֆրանքէն աւելի կը ծախսէ։

ԱՆԴԼԻԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Զմիւռնիոյ լրագրաց մէջ կը կարդանք թէ անդլիական չորս մարտանաւեր Տբրէնոֆ, Թօլոռ, Ա-ոորէլա և Լէոորէն, Մէրմերիսի նաւահանգիստը ժամաներ են, ուր շաբաթ մը պիտի մնան։

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կայս. Իրատէ մը հրամայած էր որ մայրաքաղաքիս մէջ մնայուն ցուցահանդէս մը կազմակերպուի, ուր ի տես դրուին թուրքիոյ հողային ու ճարտարարուեստական արտադրութիւնք և ընտանի անասունք։ Այդ, այդ ցուցահանդիսի կազմութեանը համար անցեալ հինգշաբթի օր յանձնաժողով մը ի նիստ դումարուած է, զոր կը կազմէին Երկրագործական Դրամատան տնօրէն Ճէմալ պէյ, Առևտրական Սենեկին նախագահ Արիստակէս էֆէնտի Ազարեան, առեւտրական տնօրէն Խամիլ պէյ, երկրագործական տնօրէն Նուրի պէյ, եւ ընդհանուր քննիչ-անատնարոյժ Մէհմէտ Ալի պէյ։ Ցանձնաժողովն իւր սոյն նստին մէջ իրեն նախագահ ընտրած է Ազարեան Արիստակէս էֆէնտին։

ՍԷՕՑԻՍՏԼԻԻ ՇՈՒԵՆԱՒԸ

Զիւռնիայէն կը գրեն թէ Իսաբէի Մախսուսէի Սէչի-ոէլ- շոգենաւը որ անցեալ շաբթուն Կ. Պոլսէն մեկնած էր, ուրբաթ օրը հասեր է այդ նաւադիստն, ուր պապեր է Կ. Պոլսէն առած ուղեւորները և անտի առեր է 2000 զօրք, բաւական քանակութեամբ ալիւրը, բէթրոյլ և այլն, եէմէն փոխադրելու համար։

ՊՈՇՏՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Թ-էլիկ Վէֆայէն քաղուած)

Կայս. Իրատէ մը արտօնած է որ ասիական երկաթուղեայ ընկերութիւնը՝ Կէյպրէի կամուրջին մօտ ուրիշ նոր կամուրջ մը կառուցանէ։

—Պետական Խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, Տարսուս-Ադանայի այս տարուան երկու շրջանաւարտներէն զատ, Հեռագրական և Թղթատարական վարչութեան պաշտօնեայներէն երկու անձինք եւս ի Փարիզ հեռագրական վարժարանը պիտի ղրկուին։ Այդ երկու պաշտօնեայք պիտի ընտրուին մրցման քննութեամբ։ Այդ երկու շրջանաւարտից և երկու պաշտօնէից իւրաքանչիւրն երեք հարիւր լիւսունական ֆրանք ամսաթոշակ պիտի ստանան։

—Կայս. Իրատէի մը համաձայն, անցեալները 11,323,761 զրուշնոց Վարդապահ Սահիդէներ այրուած էին ի ներկայութեան Եշմական դանձուն և Հանրային Պարտուց վարչութեան կողմէ կարգեալ պաշտօնէից։ Արդ, Պետական Խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, պիտի այրուին նաեւ 27,794,194 զրուշ քսան փարանոց 1,016,124 հատ դրոշմթուղթ։

—Վանայ կուսակալութիւնն, ըստ տեղեկագրութեան Հէքքէարիի կառավարչին, հեռագրած է ներքին գործոց նախարարութեան թէ Կավար գաւառակի Հէրիքի Աշիրէթէն Բիրօ, որ մէկ քանի տարի առաջ Պարսկաստան գնացած էր, այս անգամ քսան անուրէ բաղկացեալ իւր հետեւորդներով վերադարձեր և տեղական կառավարութեան հնազանդութիւն յայտներ է, որով վերահաստատուեր է իւր նախկին բնակավայրին մէջ։

—Տրապիզոնի կուսակալութիւնն հեռագրած է ներքին գործոց նախարարութեան թէ Դընայրօղլու Ա.հմէտ և Մէհմէտ անուն աւազակները Սուրմինէ գաւառակին մէջ ձերբակալուելով բանտարկուեր են։ Այդ երկու աւազակներ Բարբերդի գաւառակին մէջ աւազակութիւններ բրած էին։

